

**ՀՀ Արմավիրի մարզի Լենուղի համայնքի
ղեկավարի 2013թ.-ի տարեկան
հաշվետվություն**

17.01.2014թ.

Հարգելի ընկերներ, ավագանու անդամներ և հրավիրվածներ Ձեզ եմ ներկայացնում Լենուղի համայնքում կատարված մեկ տարվա աշխատանքների հաշվետվությունը:

Գյուղատնտեսություն:

Լենուղի գյուղը ունի 650հա գյուղ մշակության հողեր, որտեղ հիմնականում մշակվում են պտղատու և խաղողի տեխնիկական սորտի այգիներ: Գարնանը մաքրվել և վերանորոգվել է ներտնտեսային ոռոգման ցանցը շուրջ 35 կմ: Ստացվել է 95,0տ. ագրտական պարարտանյութ 6000դրամ մեկ պարկը և 6,0տ. դիզ վառելիք 350դրամ լիտրը արժեքով բաշխվել է բոլոր հողագործներին: 2013թվականի գյուղատնտեսական տարում արտադրված գյուղատնտեսական մթերքները անխափան մթերվել է ՄԱՊ-ՓԲԸ, ՆՈՅԱՆ, Արմավիրի կոնյակի գործարանների կողմից:

Կրթություն և մշակույթ

Գյուղում ունի գեղեցիկ վերջերս վերանորոգված դպրոցի շենք, որտեղ սովորում է 280 աշակերտ: Դպրոցը համալրված է բարձրորակ և որակյալ մասնագետներով: Գյուղապետարանը միշտ իր աջակցությունն է ցուցաբերել դպրոցին: Դպրոցի շենքում գյուղապետարանի հովանավորության գործում է նախակրթարան իր 20 երեխաների թվաքանակով: Անմխիթար վիճակում է գյուղի կուլտուրայի տունը, որի պատճառով, ոչ մի միջոցառում չի անցկացվում կուլտուրայի տանը:

Տրանսպորտ

Գյուղը սպասարկում է երթուղային տաքսիներ, որոնք գյուղից մեկնում են յուրաքանչյուր 20րոպեում: Համայնքում 2013թվականին Սկսվել և շահագործման է հանձնվել 2,0 կ/մ ճանապարհի ասֆալտապատման աշխատանքները:

Կոմունալ տնտեսություն

Յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում գյուղի շրջիկ մեքենան տեղափոխում է գյուղի աղբը 2կմ հեռավորության վրա գտնվող աղբանոց: Շատ վատ վիճակում է գտնվում խմելու ջրի ներտնտեսային ցանցը, որը կառուցվել է 1962թ.: Երեք խորքային նասոսներ աշխատելով 8-10 ժամ գյուղի վերջամասերում նույնիսկ խմելու ջուր չեն կարողանում վերցնել:

Ֆինանսներ

Եկամուտների մասով Լենուղի համայնքի 2013թվականի վարչական բյուջեով նախատեսված 31465,3 հազար դրամից փաստացի կատարվել է 30982,5 հազար դրամ, կատարողական %-ը 98,4 որից սեփական եկամուտներ՝ 16182,4 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 15711,0 հազար դրամ կատարվել է 97,1% -ով:

Պետբյուջեից ստացված դոտացիա - 14771,6 հազար դրամից մուտք է եղել 14771,6 հազար դրամ:

Պետ բյուջեից ստացված սուբվենցիա - 511,3 հազար դրամից մուտք է եղել 499,9 հազար դրամ:

Ներկայացվում է սեփական եկամուտները ըստ հոդվածների՝

1. Հողի հարկ՝ նախատեսված 9052,7 հազ.դրամից փաստացի մուտքագրվել է 8481,6 հազ.դրամ

2. Գույքահարկ շենք շինություն նախատեսված 90,0 հազ. դրամից փաստացի մուտքագրվել է 903,5 հազ.դրամ

3. Ֆիզ.անձ և իրավ. անձանձ փոխադրամիջոցների գ/հարկ նախատեսված 332,0 հազար դրամից փաստացի մուտքագրվել է 2839,9 հազար դրամ

4. Վարձակալական հողերի վարձավճարից նախատեսված 2100,0 հազար դրամից փաստացի մուտքագրվել է 2061,4 հազ.դրամ

5. Մատուցվող ծառ. դիմաց վճար նախատեսված 1600,0 հազար դրամից փաստացի մուտքագրվել է 1424,4 հազար դրամ:

6. Տեղական տուրքեր նախատեսված 20,0 հազար դրամից փաստացի մուտքագրվել է 0.0 դրամ

Ծախսեր՝

Ներկայացվում է վարչական բյուջեով ֆինանսական ծախսերը ըստ՝ հոդվածների

1. Աշխատավարձ նախատեսված 17041,3 հազար դրամից փաստացի ծախս 16879,1 ազար դրամ

2. Երիտասարդական ծախսեր նախատեսված 1350,0 հազար դրամից փաստացի ծախս 1350,0 ազար դրամ

3. Գրասենյակային ծախսեր նախատեսված 250,0 հազար դրամից փաստացի ծախս 245,0 ազար դրամ

4. Տրանսպորտային ծախսեր նախատեսված 1120,0 հազար դրամ փաստացի ծախս 920,0 ազար դրամ

5. Կապի ծախսեր նախատեսված 580,0 հազար դրամից փաստացի ծախս 551,0 հազար դրամ
6. Զեռուցման դիմաց է.էնէրգիա ծախս՝ նախատեսված 470,0 հազար դրամից փաստացի ծախս 470,0ազար դրամ
7. Գործողուն նախատեսված 110,0 հազար դրամից փաստացի ծախս 109,0հազար դրամ
8. Տեղեկատվական ծառայություն նախատեսված 160,0 հազար դրամից փաստացի ծախս 139,5հազար դրամ
9. Արց օգնություն՝ նախատեսված 2100,0 հազար դրամից փաստացի ծախս 2060,0ազար դրամ
10. է.էնէրգիա ծախս՝ խ/ջ համար նախատեսված 4664,0 հազար դրամից փաստացի ծախս 4495,0հազար դրամ
11. Ընդհանուր բնույթի այլ ծախսեր՝ նախատեսված 920,0հազար դրամից փաստացի ծախս 317,0 հազար դրամ
12. Պրամաշնորհի տրամադրումը Լենուրի համայնքի դպրոցի նախակրթարանին նախատեսված 1200,0 հազար դրամից փաստացի ծախս 1200,0հազար դրամ
13. Նվիրատվություն հասարակական ոչ առևտրային կազմակերպություններին նախատեսված 300,0 հազար դրամից փաստացի ծախս 47,6 հազար դրամ:
14. Ըննք-շին. ընթացիք նորոգում և պահպանում նախատեսված՝ 1200,0 դրամի դիմաց փաստացի 0.0 դրամ:

Ընդամենը վարչական բյուջեով նախատեսված ծախսեր 31465,3 հազար դրամի դիմաց ծախսվել է 28783,1 հազար դրամ

2013 թվականի Լենուրի համայնքի տարեկան ֆինդային բյուջեով նախատեսված 4112,9հազար դրամից փաստացի ծախսվել է 905,0 հազար դրամ՝ որը ծախսվել է Լենուրի համայնքի խ/հ պոմբի վերանորոգում :
Աշխատազարձի և եկամտային հարկի գծով պարտքեր չուճեք :

Լենուրի Գլուրի հիմնախառնոն են՝

1. Խմելու ջրի մեղմեցման ցանց.
2. Կուլտուրայի տան վերանորոգում.
3. Մանկապարտեզի շենքի կապիտալ շինարարություն:

ԼԵՆՈՒՐՈՒ

ԳՅՈՒՂԱՊԵՏ

Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

